ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

Հայաստանի քիմիական հանդես
Химический журнал Армении **73, №1, 2020** Chemical Journal of Armenia

ՄԱՀԱԽՈՍԱԿԱՆ

ԺՈՐԱ ԱՐՄԵՆԱԿԻ ՉՈԲԱՆՅԱՆ

2019 թ. դեկտեմբերի 3-ին երկարատև հիվանդությունից հետո 75 տարեկանում մահացել է հայ հայտնի քիմիկոս, քիմիական գիտությունների դոկտոր Ժորա Արմենակի Չոբանյանը:

Ժ.Ա.Չոբանյանը ծնվել է 1944 թ. փետրվարի 15-ին Արցախի Մարտակերտի շրջանի Զարդախաչ գյուղում: 1970 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի Պետական համալսարանի քիմիական ֆակուլտետը, իսկ 1974 թ.՝ ՀՀ ԳԱԱ Օրգանական քիմիայի ինստիտուտի ասպիրանտուրան: 1979 թ. պաշտպանել է, Ենինային հալոգենիդների վերականգնիչ դեհալոդիմերման և օքսիդիչ ամինոլիզի ռեակցիաներրը թեմայով գիտական թեզ և ստացել քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2006 թ. պաշտպանել է, Դիենային և ացետիլենային համակարգերի փոխարկումները մանգան- և սնդիկօրգանական միացությունների կիրառմամբ թեմայով թեզ և ստացել քիմիական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Երկար տարիներ Ժորա Չոբանյանը աշխատել է չհագեցած համակարգերի կատալիտիկ փոխարկումների պարզաբանման և բնական կենսակարգավորիչների, այդ թվում ֆերոմոնների սինթեզի ոլորտում:

Ժ.Ա.Չոբանյանը 120-ից ավելի գիտական աշխատանքների և արտոնագրերի հեղինակ է, նրա ղեկավարությամբ պաշտպանվել է 5 թեկնածուական թեզ:

1970 թ. մինչ 2018 թ. Ժ.Ա.Չոբանյանը աշխատել է ՀՀ ԳԱԱ ՕԴՔ ԳՏԿ ՕՔԻ-ում նախ որպես կրտսեր, ապա ավագ գիտաշխատող և լաբորատորիայի վարիչ, վայելել գործընկերների հարգանքը և համակրանքը:

Հայաստանի գիտական հանրությունը ծանր կորուստ է կրել: Ժ. Չոբանյանի հիշատակը հավերժ կմնա գործընկերների և մտերիմների սրտերում: